

կն հեղեղի մէջ, կանգնեն երկնային անարատ լուսոյ կենդանի մէջ, Թող այդ բոլոր մարդիկ իրանցին միտքը շփոթող մարդութիւններէց, մարմինը մաշող հեշտութիւններէց, հոգին ապահանսող մեղքերէց, և միմեանց շնորհաւորեն ու ցանկան Կոնգրեսի տօնի երջանկութիւն, որ ես էլ ձեզ ամէնից ի սրաէ մաղթում եմ, եկէք ամէնքս մեծ ու փոքրը, հարուստն ու աղքատը, յանցաւորն ու վշտացածը, ամէնքս՝ հաւատարապէս մեղաւորներս և հաւատարապէս փրկութեան յուսացողներս՝ եղբայրներ յէս կանգնեց Մաւուկ-Արքայի խանձարուրի մօտ, որ տեսներ լոյս նորա լուսոյ մէջ, որ այս տեղից մեկնեց խառնանցած, սրբացած, բերկրացած և յուսով ու արկութեամբ լցուած: Արև, լուսաւորեաց, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեսն ի վերայ քո ծագեցին: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր և մառախլող գնեթանսս բաց ի քեզ Տէր յայտնեցի, և փառք նորա ի քեզ երևեցին»:

Ս. Մ.



ԿՐՈՆՉՏԱԳԻ ԱՒԵՐ ՔԱՅԱՆԱՅ
 Ի ՈՒՆՆՆ ՍԵՐԳԵԵՒԻ
 70 ԱՄԵՆՅ ՅՈՒՆԵՆԵՆԸ:

ՍԵՐ այս նիւթապաշտ զարում, երբ կարեկցութիւն և մարդասիրութիւն աւելի խօսքով քան գործով են երևում, երբ անձնական շահ ու բաղաւորութեան ձգտում զբախան փրկիստիպայութեան հիմունք են համարուած, սթափեցուցիչ և թարմացնող ազդեցութիւն են գործում այնպիսի անձինք, որ այս ընդհանուր հասանքի հակառակ դնալով՝ մեծաւորն ու եղբօր համար խորհում ու գործում են: Կրկնակի հրապուրել է գառնում այդպիսի պատկերը, երբ խօսքը ոչ թէ մի ընդարձակածաւալ երկրի սիրող իշխանի մասին է, կամ վաճառականական աշխարհի բաղբը ձեռքում խաղացնող մի Կրեոսոսի կամ արտակարգ հանձարի, այլ հասարակ գասից ծագած համեմատաբար ու կոչման տէր անձի, որ իւր բարեգործ ու մխիթարող ձեռքը շատ հեռուն է մեկնում, իսկ անունն ու համբուր աւելի ևս հեռու է տարածուում, որովհետև ազդակցին օգնելու

զաղափարը չէ, որ սահման է դնում նրա բարեգործութեան շրջանին, այլ Պղոթմած Սամարացու զաղափարը:

Ահա այս կարգի անձնաւորութիւններէց է Կրոնչաստի աւագ բաժանայ Կ. Իոհաննէր, որի 70 ամեայ յոբելեանը կատարուեցաւ ներկայ ատարայ հոկտեմբերի 19-ին:

Այս պատմական քահանան ծնուած է 1829-ին Մուրա աւանում մանկական հասակում թող ու տկար՝ ցուից նա այժ չէ բաց արել, Հիւանդութիւնը նրանից չի հեռացել և պատանեկութեան տարիներում, սրով բացատրում է ինքը իւր դոսած դժուարութիւնը ուսման մէջ, որին յաղթելու համար անդադար ազօթում ու Աստուծոյ օգնութեան էր զիմում: Տարեքի հետ սակայն տկարութիւնը պակասում է: Աստուածային լուսով պայծառացած՝ միտքը բացուում է զհաւթեանց համար, և նա 1855 ին արդէն առաջին աշակերտ՝ աւարտում է Ս. Պետրբուրգի հոգևոր ձեմարանը, աստուածաբանութեան կանդիտատի մրցանակագրով:

Աստուածաբանական, փիլիսոփայական և պատմական զիտութիւնները ընդարձակեցին և խորացրին իմ աշխարհատեսութիւնը: Հին և նոր Կաթոլիկանների ընթերցանութիւնը, Յովհան Առկեբերանի և ուրիշ եկեղեցական հարց երկերի ուսումնասիրութիւնը զարթեցրին սէր դէպի քահանայական կոչումը: Մարդկանց հոգևոր փրկութեանը օգնելու ցանկութեամբ այրուում էի, և Աստուած իմ բաղձները կատարեց. բարձրագոյն ուսումնաւարակութիւն յետոյ՝ շուտով քահանայական պաշտօնին բարձրացայ: Եւ ահա 44 տարի է, որ այդ սպասարարութեան մէջ եմ, միջնորդ լինելով արարածոց և Երարչի մէջ, հաշտութեան և բաւութեան ամենօրեայ անարեւն պատարագըն եմ մատուցանում, սրով և ինքս էլ հաշտուում եմ Երզրարդատ Գատաւորի հետ և յայտնում նորա կամքը կորստեան ճանապարհում մոլորուող մարդոց:

Հ. Իոհաննէ համբուր Ռուս հասարակութեան մէջ գնալով բարձրանում է, և նորա սիրողները, լաւ ևս ասել պաշտողները թիւը՝ անհամար է: Նրան ոչ միայն իր բարեգործ, մաքրասէր քահանայի են ճանաչում, այլ հրաշագործի տեղ են զբեւ. հաստատ հաւատացողներ կան—իսկ զբանք անթիւ են,—որ նորա միակ օրհնութիւնն ու ազօթքը՝ ձեռքը զլիսին զսեւը, նոյն իսկ հայկացքը կամ շորերին զխմելը, առողջութիւն կպարզէ և հիւանդին: Աւելորդ չի լինիլ այս առթիւ՝ Ս. Ս. ՅԵՏՈՄՈՍԻ ԹԵՐԹԻՑԵՅ մի աշխատակցի բացատրութիւնը մէջ բերել:

Քննդհանրապէս Հ. Իոհաննէն սիրում և յարգում է մանաւանդ հասարակ, աղքատ դա-

1. Եւ. Կ. 1, 2:

սակարգը, և անճար է աչք փակել այն ազգեցութեան առաջ, որ ունի յարդելի հովիւր ուսս ժողովրդի վերայ: Այդ բաղմանդամ ժողովուրդը, որի բաժինն է վիշտ, ազգատու թիւն, կարելի, ցաւ, սոսի և ամենայն, որ թշուառութեան և արեամտութեան մէջ միխթարութեան ճարտուով պատկուում է՝ Լ. Իոհաննիսի քաղցր ու ջերմ խօսքերով, հայրական գգուանքով, և անհուն սիրով հաշտուում է կեանքի անյաջողութեանց հետ: Ահա այդ ամբողջ, որ ամէնից աւելի է քաշում կեանքի ծանրութիւնը, որ մինչև այսօր շուրջը միայն իշխանաւորի սառնութիւն է տեսել և հարուստի եսասիրութիւնն ու արհամարհանքը, ամբողջ որ ի զուր է որոնել իւր մայրենի երկրում միխթարութիւն, յանկարծ գտնում է իրեն սիրող մի հայր, սրտացաւ եղբայր, անկեղծ պաշտպան և հովանաւոր: Լ. Իոհաննիսի ինչպէս երագահաս օգնականի և հողու փրկութեան համար ազօթողի՝ բերում են նորա առաջ իր հողու և մարմնի ցաւերը. նորան են զիմում արհամարհուածները, ճնշեալները և զրկեալները: Եւ այնպէս, նորա առաջ թափում են իրենց վիշտը, բաց անում խօցուած սիրտը, թեթեւացնում իրենց տառապեալ հոգին և զօրանում իրենց վիճակուած խտր կրելու համար: Պէտք չէ ուրեմն դարձնալ, եթէ համբերատար ուսս ժողովուրդը, որ իւր դասը վիճակում կարողացել է պահպանել ջերմ հաւատ առ Աստուած և առ նորա հանդերձեալ արգար դատաստանը՝ գթաբէր և սէր հօր մի հայեացքով, նորա մի քաղցր խօսքով թեթեւութիւն է զգում իւր տառապեալ հոգու և մարմնի մէջ: Զարմանքի ինչ բան կայ. կամ ինչ դերբնական զօրութիւն, բարձր քան մարդկային բնութիւնը, որի վերայ ոմանք ապշել են, իսկ ուրիշները ձեռագրում են: Աւր անսիրտ եսականութիւնը իւր բունն է հիւսել, ուր անճանկան շարժ հայեանքի շահից բարձր է դատուած, ուր «ուսնը աւազել վերայ է շինուած մի այնպիսի ճարտարապետութեամբ, որ օտար է հայրենի հողին, ուր ճարտիկները հաստատուած արմատ են բռնել իշխանութեան շուրջը և թշուառ իրականութեան առաջը փակել, ուր սուրբ նպատակները հետամուտութեան առարկայ չեն և այնքի ձգտումները տառապել են միայն, վերջապէս ուր ազնուութիւնը ջնջուել է՝ տեղի տալով քմահաճութեան, բռնակալութեան, բռնաբարութեան, փող զիղկելու անսիրտ հետեւութեան, այն տեղ—որին վկայ աստուածաշունչը— պէտք է մարդարէ յայանուել, այնտեղ մարդկանց մէջ պէտք է քրիստոսեայ մարդ երևայ: Լ. Իոհաննիսը ոչ թէ «կայծակնամարտը մարդարէն» է, որ խօսքով այլում է մարդկանց սիրտը, այլ վշտացած հոգիների մի հեղ միխթարել: Եւ նա բարձր պահելով Քրիստոսի աւանդած դրօշակը, արժանապէս կատարում է իւր պաշտօնը միակ անկեղծ և սքրտակից բարեկամ և մեր հոգու համար ազօթարար:

Նորա 43 տարուայ քահանայութիւնը անվերջ բարեգործութեանց, մասնաւորապէս իւր հօտի բարեւաւութեան և ընդհանրապէս համաքրիստոնէական գաղափարի յազմանակի համարեղած ջանքերի մէջ շրջայ է: Ծանկահայ թշուառները անգամ մասն ու բաժին են ունեցել նրա անբոստիրութիւնից: Ի զուր չէ, որ Լ. Իոհաննիսի համարը Թուսաց ընդարձակ սահմաններից շատ հեռի է տարածուել: Անդլիայում, Ամերիկայում կրօնական թերթերը լուրջ յօդուածներ են նուիրել նրա անճարութիւնը, գործերը ճանօթացնելու համար, նորա բարոյները թարգմանել և աժամ գնով ստուի են ժողովրդի մէջ. այս բոլորը վկայում են, թէ Լ. Իոհաննիսը օրցան բարձր է կանգնած վեճերից և ազգային նեղ գաղափարից և սրչափ նպաստում է ազգերի ընդհանուր եղբայրութեան գաղափարին:

Աւելորդ չի լինի մի քանի խօսք էլ ասել նորա արտաքինի մասին:

Նա միջահասակ մարդ է, բարձր ու կրնճուտ ճակատ ունի, ունսովոր բարութեամբ փայլող աչքեր, բուրբակ երես, բաւական կարմիր այտեր, յոգնած մարդու արտաշայտութեամբ, այն նորա զէմբը: Բայց նորա խօսակցութիւնը շարժուածքը զգալ են տալիս, որ նա սովորական մարդկանցից ամբողջ գլխով բարձր է:

Նա ի ծնէ մարդոց առաջնորդ լինելու է կոչուած. բնութեամբ այրատամիտ հակումների տէր՝ որոշ սահմաններում անպայման պահպանողական է: Նա միշտ իւր անուան վերելք խաչ է դնում, որ նրա կեանքի գաղտնիքն է:

Նորա բարեգործութեանց մասին մի փոքր գաղափար տալու համար, յիշենք մի քանիսը:

- 1) Կրօնշատուում նա հաստատել է «ազգատների համար աշխատասիրութեան ստուն», որի անձեռնմխելի մայր գումարը հասնում է 447,407 լուրու:
- 2) Արքայ ապաստանարան:
- 3) Երեխայոց ցեղեկուայ հանգստութեան տեղ:
- 4) Սկզբնական մի ձրի դպրոց:
- 5) Հիւանդանոց (երթեկներ):
- 6) Կտու մաքրելու արհեստանոց:
- 7) Կոշկահարութեան և կաշմարարութեան արհեստանոցներ:
- 8) Ժողովրդական խոհանոց և սեղանատուն:
- 9) Գրականատանոց:
- 10) Փիշեքուայ ապաստանարան:
- 11) Ազգատ կանանց խնամակալութիւն:
- 12) Նպատա մատակարարող մի ընկերութիւն և ին և ին. Այս ցանկը շատ կերկարէր, եթէ կամենայինք նորա բոլոր բարեգործութեանց հաշիւն անել: սակայն այդքան էլ բաւական է ցոյց տալու համար թէ նա ինչպէս բազմակողմանի և արդիւնաւոր գործունէութիւն է ցոյց տուել և տալիս է, և թէ ուր են ուղղուած նորա խնամքի բուն ջանքերը:

Եթէ մի սոսկ քահանայ, առաջնորդ ունենալով Քրիստոսի «սիրոյ» քարոզը՝ այնքան մեծածնէ գործեր կարող է կատարել, օգտակար լինելու համար ընկերին այս թշուառութեան վայրում՝ ապա եթէ աշխարհի զօրութիւններն ու մեծերը նորա կէս ջանքը գործ դնէին, անշուշտ Քրիստոսի արքայութիւնը պէտք է իշխէր ամենուրեք: